Հավելված թիվ 1
ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի ավագանու
2021 թվականի մարտի 26-ի թիվ 21 Ն որոշման

ԿԱՐԳ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ

1. Նոր Խաչակապ համայնքում սանիտարական մաքրումը ներառում է ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների,կամուրջների և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևներից, կենդանիների դիակներից, ավազից, քարերից և ձյունից:
2. Համայնքի սանիտարական մաքրման աշխատանքները կապված տարվա եղանակների սեզոնայինության բնույթով և դրանց առաջացրած սանիտարական մաքրման խնդիրների լուծումներով տարբեր են, ուստի և սանիտարական մաքրման աշխատանքները բաժանվում են երկու տիպի՝ ամառային և ձմեռային:
3. Ամառային սանիտարական մաքրում,- Այն իրենից ներկայացնում է սանիտարական մաքրման ձեռքի աշխատանքներ, որի նպատակն է սահմանված նորմերին համապատասխան ապահովել համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների պատշաճ մաքրումը աղբից, թափված տերևներից, կենդանիների դիակներից այդպիսով պատշաճ տեսքի բերելով համայնքի ընդհանուր օգտագործման տարածքները գերծ պահելով այդ տարածքները զանազան հակասանիտարական վիճակներից: Սանիտարական մաքրման արդյունքում հավաքված աղբը հավաքվում է համայնքի փողոցներում տեղադրված աղբարկղներում:
4. Ձմեռային սանիտարական մաքրում,- Այն իրենից ներկայացնում է տեղացած ձյունից, գոյացած սառցակույտերից և աղբից համայնքի փողոցների մաքրումը և հեռացումը:
5. Համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի ծավալը կազմում է 29,4 տոննա:
6. Նոր Խաչակապ համայնքում սանիտարական մաքրման համար անհրաժեշտ մեքենա մեխանիզմներին ներկայացվող պահանջները.
   1) Նոր Խաչակապ համայնքում սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի տեղափոխումը պետք է կատարվի միայն աղբահանության համար օգտագործվող բեռնատար մեքենաների միջոցով՝ ձեռքով, իսկ աղբամաններից մեքենայացված բարձման միջոցով:
   2) Փողոցներից և ընդհանուր օգտագործման տարածքներից ձյան մաքրման աշխատանքները պետք է կատարվեն համապատասխան մասնագիտացված մեքենաների կամ դրանց փոխարինող մեխանիզմների միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՏՈՈՒԶՅԱՆ